գեղարվեստական արժեքի ու գաղափարական նշանակության մասին: Լինելով դարասկզբի «արվեստագետ» սերնդի ամենատիպիկ ներկայացուցիչներից մեկը, իր «Արևելքի բոցեր» բանաստեղծությունների գրքով անմիջականորեն արձագանք լինելով հատկապես «հեթանոսական» շարժմանը, բանախոսը Վարուժանի ստեղծագործության հիմնական երակը համարում է բնության հետ հարազատությունը, ուժի ու գեղեցկության պաշտամունքը: Նա այդ հատկանիշներին վճռական տեղ է հատկացնում նաև «Ցեղին սրտում». «Անիկա մեկ ծայրեն մյուս՝ բնապաշտ խորարմատ ձգտում մը ունի, վարդագույն հավիտենական ուժին վճիտ առաքինությունը ազգի մը մեջ մասնավորելու համար, չարչարված, բայց հուսկ հաղթահարող Գեղեցկին կայծակնաշող տեսանողությամբ, և տառապանքին ու արցունքին մեջ անգամ ազնվականորեն հպարտ երևալու համար»: Բանախոսը սրա մեջ է տեսնում այն նորարարական ոգին, որով Վարուժանը վճռականորեն փոխում էր արևմտահայ գրականության մեջ հարուստ ավանդույթներ ունեցող հայրենասիրական երգի տարերքը:

Մասնավորելով իր խոսքը «Հեթանոս երգերի» շուրջ՝ Գոլանճյանն իրավացիորեն նկատում է, որ հեթանոսական ուղղությունը իր բնույթով միայն հայկական երևույթ չէր. համանման մի մտայնություն նա տեսնում է եվրոպական գրականության մեջ, մասնավորապես Լըկոնտ դը Լիլի և նրա դպրոցին հարող բանաստեղծների ստեղծագործության մեջ: Այդ մտայնության հիմքը, ինչպես դիտում է բանախոսը, դժգոհությունն էր ժամանակակից քաղաքակրթությունից, առողջ կրքերի, ուժի ու գեղեցկության ձգտումը, հատկանիշներ, որ այդ ուղղության ներկայացուցիչները որոնում էին անցյալի պատմության հերոսական դրվագներում: Այդ տեսակետից էլ բանախոսը դիտում ու վերլուծում է Վարուժանի «Հարճը»: Նա հատուկ չի դնում հայ բանաստեղծի «հեթանոսության» ազգային առանձնահատկությունների, եվրոպական համաբնույթ հոսանքներից նրա տարբերության հարցը: Սակայն վերլուծության տրամաբանությունից եզրակացվում է, որ համամարդկային գաղափարներն ու իդեալները «Հեթանոս երգերում» ձեռք են բերում ազգային խորք ու գունավորում: Ահա, օրինակ, բանախոսի դիտողությունը Վարուժանի գրքում բանվորական կյանքի պատկերների մասին, որոնք ակնհայտորեն եվրոպական ծագում ունեն. «Վարուժանի մեծ տաղանդը իրապես կրցած է մեր աչքին այնքան հարազատ